**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1**
**№ՀԲՄԱՊՁԲ-20-4/1-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ**

ք. Երևան

19.12.2019թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և «Կարկոմավտո» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության գլխավոր տնօրեն Վ. Ղուկասյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, հիմք ընդունելով 17.12.2019թ. կնքված №ՀԲՄԱՊՁԲ-20-4/1-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.13 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. **Համաձայնագրի առարկան**

1.1 Սույն Համաձայնագրով Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով, Համաձայանագրի №1 Հավելվածով՝ նախատեսված ժամկետներում և ծավալներով Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին որպես սեփականություն հանձնել Պայմանագիրի №1 Հավելվածով նախատեսված տեսակի և որակի ապրանք (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

2. **Համաձայնագրի գինը և վճարման կարգը**

2.1 Սույն Համաձայնագրով Վաճառողի մատակարարած Ապրանքի միավորի գինը ներկայացված է սույն Համաձայնագրի №1 հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 19 900 000 (տասնինը միլիոն ինը հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

2.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.3 կետով և սույն համաձայնագրի N 2 հավելվածով նախատեսված վճարման ժամանակացույցով սահմանված կարգով:

3. **Այլ պայմաններ**

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն հասք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 2 թերթից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Համաձայնագրի №1, №2 Հավելվածները՝ բաղկացած են 1 թերթից, հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՊՆ Տ և ՀԿ վարչությունը:

4. **Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | «Կարկոմավտո» ՍՊԸ |
| ք. Երևան Բագրևանդի 5 | ՀՀ.ք. Երևան, Կոմիտաս 47, |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | «Էյչ Էս Բի Սի բանկ Հայաստան» ՓԲԸ |
| Հ/Հ 900011024537 | Հ/Հ 217001094077001 |
| ՀՎՀՀ 02522157 | ՀՎՀՀ 00059627 |
| ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ | Գլխավոր տնօրեն |
| Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ | Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ |

Հավելված N 1
N ՀԲՄԱՊՁԲ-20-4/1-1 համաձայնագրի

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/հ | Գնման առարկան | Հ/մ | Քանակը | Միավորի գինը /ՀՀ դրամ/ | Ընդհանուր գումարը /ՀՀ դրամ/ | Ապրանքների մատակարարումը 2019թ. ըստ եռամսյակների, ընդ որում՝ |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | 4-րդ, բայց ոչ ուշ քան 20.12.2019թ. |
| 1 | Մինիավտոբուսներ (միկրոավտոբուս) Ֆորդ տրանզիտ 470 Վան | հատ | 1 | 19900000 | 19900000 | 1 |

Հավելված N 2
N ՀԲՄԱՊՁԲ-20-4/1-1 համաձայնագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/հ | Գնման առարկան | CPV կոդը | Վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան, 24.12.2019թ., |
|---|---|---|---|
| | | | դեկտեմբեր |
| 1 | Մինիավտոբուսներ (միկրոավտոբուս) Ֆորդ տրանզիտ 470 Վան | 34111270/2 | 19900000 |

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Կարկինատոր ՍՊԸ»

Գլխավոր տնօրեն

00059627